ցանել զթափուրն հրեշտակաց, հայցեմք 'ի քէն զթուէ յիշեալ զմեզ, եւ առ քո բարեխօսեալ վասն մեր, զի հաստատեալ քոյին յօժանդակութեամբդ, արժանիք լիցուք հասանել յարքայութեան երկնից ամէն :

Եւ 'ի հռչակաւոր եկեղեցիսն սրբոյն Պետրոսի, սրբոյն Պօղոսի, եւ սրբոյն Յովհաննու, այցարասցէ զսեղանս առաքելոցն, եւ ասիցէ զմի հայր մեր եւ ողջոյն, բաղձալով 'ի բոլոր սրտէ, համահետեւիլ առաքինութեանց վերոյիշեցեալ առաքելոցն; եւ կամ ասիցէ զայլս աղօթս սոյնպիսիս:

Իսկ 'ի մէջ Մարիամու մեծահռչակ, առաջի սեղանոյ սրբազնոյն կուսին, ասիցէ զպաղատանս նորին որ է լիթանիայն, հաւատալով զամենայն խորհուրդս, որ արար Աստուած առ կոյսն; յուսալով, տեսանել զնա 'ի երկինս; եւ սիրել յետ Աստուծոյ, զնա յամենայն սրտէ, որքան կարէ =

Յելանելն եկեղեցւոյն եւ ընթանալն զճանապարհ իւր, 'ի մէջ միոյ եկեղեցւոյն առ միւսն, ասասցէ զայլ երկուս մասունս ամենայն վարդարանին; եւ ներ ճանապարհին վերջնոյ եկեղեցւոյն, ասասցէ զպաղատանսն

ամէ